№ 131 Օգոստոսի 8 (20) 1879 Օգոստոսի 8 (20) № 131

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Ռացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքիա և արաբական տառերը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Իտալիա։ Գերմանիա։ Թիւրքիա։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԱՌԵՐԸ

—

Ինչքան փորձեր եղան պատմութեան մէջ դարձնել արաբական տառերը քաղաքակրթութեան միջոցներ և ամբոխի մէջ գրագիտութիւն տարածողներ,—այդ բոլոր փորձերը միշտ անաջող եղան և արաբական տառերը անկարող հանդիսացան ամբոխի մէջ գրագիտութիւն տարածելու։ Այն ազգերը կամ ցեղերը, որոնք ընդունեցին արաբական տառագրութիւնը, նրանք միշտ մնացին տգէտ, անշարժ, նրանց մէջ գրագիտութիւնը երբէք չը տարածվեց։

Նոյն դրութեան մէջն է մահմետական Թիւրքիան։

Բայց այժմ Թիւրքիան կամենում է լուսաւորված երկիր դառնալ, կամենում է իր պետական ամբողջ կազմակերպութեան մէջ վերանորոգութիւններ անել, յանդգնում է ձգտել սահմանադրական երկիր դառնալ։

Սահմանադրութեան գաղափարի հետ կապված է ժողովրդի, ամբոխի մեծամասնութեան ինքնաճանաչութիւնը, ազգի գիտակցական մտաւոր զարգացումը, որովհետև սահմանադրական երկրում ազգը ընտրում է իր օրէնսդրական օրգանը, իր ազգային ժողովը, իր ներկայացուցիչներին, ազգը ինքն իրան է կառավարում։... Բայց կարելի է, մի՞թէ, որ ազգը ինքն իրան կառավարի, եթէ նա տգէտ է, եթէ նա անգրագէտ է։ Ի հարկէ ոչ։

Ուրեմն նախ պէտք է ազգի մէջ գրագիտութիւն տարածել։

Իսկ ահա ինչքան դար է, որ Թիւրքիան չը կարողացաւ իր ժողովրդի մէջ գրագիտութիւն տարածել, որովհետև գրագիտութիւնը ամբոխի մէջ տարածելուն միշտ արգելում էին Թիւրքաց լեզուի մէջ ընդունված արաբական տառերը։

Արաբական տառերով մի բան կարդալու համար հարկաւոր է կեանքի ամբողջ կէսը նուիրել այբուբենը սովորելուն և երկրորդ կէսը կարդալու մէջ վարժվելուն, այնպէս որ ժամանակ չէ մնում նոյն իսկ ընթերցանութեանը....

Այդ պատճառով եթէ Թիւրքիան կամենում է առաջադէմ, լուսաւորված, սահմանադրական երկիր դառնալ, նա նախ և առաջ պէտք է փոխի իր պետական և ազգային լեզուի տառագրութիւնը, որպէս զի կարողանայ գրագիտութիւն տարածել ժողովրդի մէջ։

Բայց մեր դարը նոր այբբենարաններ հնարելու դար չէ։ Պէտք է ազգերի եղած տառերից ընդունել արդէն պատրաստ մի այբբենարան։

Լատիներէն, յունարէն, կամ սլավոներէն տառերը յարմար չեն Թիւրքաց լեզուի պէս մի ասիական լեզուի հնչիւնները արտայայտելու համար։

Միակ տառեր, որոնցով շատ հեշտ կը լիներ արտայայտել Թիւրքաց լեզուի գրութիւնը և մահմետական ամբոխի մէջ իր մայրենի լեզուով գրագիտութիւն տարածել,—դրանք հայոց լեզուի տառերն են, դա հայոց այբբենարանն է։

Մանաւանդ որ հայոց տառերով Թիւրքաց լրագիրներ հրատարակելու բաղմամեայ փորձը աջող յայտնվեցաւ Կ. Պոլսի մէջ։

Եթէ Թիւրքիան կամենում է լուսաւորված, առաջադէմ, քաղաքակիրթ, սահմանադրական երկիր դառնալ, նա պէտք է աշխատի նախ և առաջ գրագիտութիւն տարածել ամբոխի մէջ։ Թո՛ղ նա այդ լաւ հասկանայ և հասկանայ որ արաբական տառերով երբէք մահմետական ամբոխի մէջ գրագիտութիւնը չի տարածվի։

Թո՛ղ Թիւրքաց տէրութիւնը հրաժարվի իր նեղ կրօնական ըղձացմունքից, որ ոչինչ գործ չունի լուսաւորութեան հետ, Թողնի նախապաշարմունքները և քաջութեամբ մոցնի իր ազգային և պետական լեզուի մէջ հայոց այբբենարանը։

Այն ժամանակ գրագիտութիւնը սաստիկ կը տարածվի դարերով անշարժ մնացած մահմետական ժողովրդի մէջ և Թիւրքիան արագ քայլերով առաջ կընթանայ ընդհանուր մարդկային լուսաւորութեան շաւղի վրա։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Վան, 4 յուլիս

Բարեգործին համար բարերարել և բարերարելոյն համար երախտագէտ երևնալ ամենէն ցանկալի բաներ են, ուստի Վանայ Խնամատար ընկերութիւնը՝ որ կազմուած է թշուառները խնամելու և որը ու աղքատիկ մանուկներու մէջ կրթութիւն տարածելու նպատակաւ, չը կրնար Վանէն, Դավրէժէն ու Ցիխիսէն իրեն եղած համակրական ցոյցերու առաջը լռել։ Յունիս 10-ին վանեցիք 13,000-ի չափ դրամ մը յանգանակեցին հայի թանգութենէն տպնապեալ կարօտելոց ի նպաստ՝ Խնամատար ընկերութեան առաջարկութեամբ։ Մայիս 16-ին Դավրիժոյ երիտասարդական խումբը փափաղեան բարեհամբաւ Մեսրովբ քահանայէն առաջնորդուելով՝ յօդուտ Խ. ընկ. իւր երրորդ թատերական ներկայացում տուաւ, որ արդիւնքը կը հասնի ութ օսմանեան ոսկոյ. դարձեալ մայիս ամսոյ սկիզբներ «Փորձի» պատուական խմբագրութիւնը երեք հարիւր օրինակ ազատ երգեր և քսան երեք ու կէս ռուբլիի դրամ մը ալ տփխիսեցիք նուիրեցին. թէ սոյն ձեռնտուութիւններ որչափ կը զօրացունին զԽ. ընկ. այդ ինքնին յայտնի է։

Նոյնպէս աւելորդ է գովեստներ կարդալ այդ բոլոր բարերարներուն զի ինքեանց գործը ինքնին գովեստ է։ Ուրեմն ի դիմաց Խնամատար ընկերութեան և նորա խնամելոց մ'այն հրապարակաւ անչափ շնորհակալիք յայտնելու բաղձանք կը ինդրեմք, պատուական խմբագիր, որ ձեր ազգօգուտ թերթին մէջ սոյն երկտողիս անկիւն մը շնորհելու բարեհաճիք։

(Ստորագրութիւններ)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են հետեւեալը։ «Մեր ուսումնարանին հարկաւոր 5000 ռուբլ դրամը համարեա պատրաստ է և, եթէ չեմ սխալվում, մեր քաղաքացիները յայտնել են պ. Թեմական վերատեսչին, որ նա ուսուցիչներ պատրաստէ։»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են օգոստոսի 1-ից։ «Այդտեղ մի քանի պարոններ ցանկանում են կազմել մանկական ներկայացումներ և եկող շաբաթ օր մանուկները կը տան մի ներկայացումն մի պարոնի դահլիճում։»

—

Մեր աշխատակից պ. Գ. Նիկողոսեանի յօդվածը, որի մասին յիշել էինք երէկվայ առաջնորդող յօդուածի մէջ, չը կարողացանք այսօր հրատարակել։ Այդ յօդուածը կը հրատարակենք «Մշակի» հետևեալ համարում։

—

Պ. Միխելսոնի տպարանում մեր գրաշարներից մէկը վիրաւորել է միւսին դանակով։ Վիրաւորվածը հիւանդանոցումն է, իսկ վիրաւորողը քննութեան է ենթարկված։ Այդ անցքի պատճառով «Մշակի» այսօրվայ համարը հրատարակում ենք կէս թերթի մեծութեամբ։

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ։ «Այս օրերումս ձեռնադրվեցան Սաթխայ գիւղում մի քանի քահանաներ, որոնց գիտութեան վրա խօսելն անգամ աւելորդ է։ Մեր ուսումնական քահանաներից մէկը նախնապէս լաւ կոնծած լինելով զբաղում է եկեղեցի և սպասաւորութիւն է անում։ Ողորմելու գլուխը ծանրացած լինելով քիչ է մընում, որ հաւասարակշռութիւնը կորցնէ։ Նրա ձեռքից առնում են գիրքը և հրաւիրում են դուրս գնալ եկեղեցուց։ Ոչ բարձրաստիճան հոգևորականների ներկայութիւնը, ոչ տաճարը պատկառանք չեն ազդում այդ քարոզիչների վրա։»

—

ՇԱՄԱԽՈՒ երկսեռ դպրոցների մատենադարանի վարչութիւնը խնդրում է մեզ տպել հետևեալ հաշիւը. «Շամախու երկսեռ դպրոցաց մատենադարանի։» Ա. 1-ն յունվարի 1878 թուակ. մնացել էր զուտ դրամ 552 ռուբ. 19 կ., նոյն թուականին եղել է մուտք 81 ռուբ. 78 կ., ընդամենն է 633 ռուբ. 97 կ.։ 1878 թ. եղել է ծախք 69 ռուբ. 43 կ., հայերէն և ռուսերէն օրագրաց և լրագրաց համար, ուրեմն առ 1-ն յունվարի 1879 թ. մնում է առ ձեռն պատրաստի դրամ 564 ռուբ 54 կ. Ա. 1-ն յունվարի 1878 թ. մատենադարանը ունէր 648 հեղինակութիւնք, թով 1364 հատ գրեանք, այս թուականի ընթացքում աւելացած են 4 հեղինակութիւնք 16 հատ։ 1879 թ. յունվարի 1-ին, մատենադարանը ունենում է 652 հեղինակութիւնք, 1380 հատ գրեանք, որոնց արժողութիւնն է 1370 ռուբ. 21 կոպէկ։ 1878 թ. ընթացքում վեր են առուած ընթերցանութեան համար 184 գրեանք, հաշուելով Շամախու երկու հաղար հինգ հարիւր հայ բնակչաց վրա իւրաքանչիւր 14 հոգուն ընկնում է մի գիրք։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

—

Սպօլէտի քրէական դատարանում այս օրերս մի շատ հետաքրքիր դատ էր վճռվում։

Սպօլէտցի Կարլօ Մարկուչչի անունով մի հարուստ բնակիչ մեղադրվում էր Վէնցօ-Դոմինիկիս բժշկապետի սպանութեան մէջ։ Պ. Մարկուչչի իր տասն և չորս տարեկան որդու հիւանդութեան առիթով կանչել էր տուել բժշկապետ Դոմինիկէսին, և նրան խոստացել էր 2,000 լիրա, եթէ միայն նա նրան շուտով առողջացներ, այդ մի և նոյն ժամանակ Մարկուչչի նրան ասել է, որ եթէ նրա որդուն մի բան պատահի, նա նրան կը սպանի։

Հիւանդը մեռաւ։ Մարկուչչի կանչել տուեց մի ուրիշ բժիշկ, որի հետազօտութիւնները ցոյց տուին, որ երեխայի մահը գեղերի անտեղի գործածութենից է առաջացել, և այդ մահը յառաջացել է բժշկի կատարեալ ոգիտութենից։ Մարկուչչի կատարեց իր խոստումը. բէվոլվերի մի հարուածով նա անշնչացած դիակ շինեց բժիշկ Դոմինիկէսին։

Սպօլէտի քրէական դատարանը մարդասպանին հինգ տարի ժամանակամիջոցով բանտարկեց, և յօդուտ բժշկի այրի կնոջ 25,000 ֆրանկ տուգանք առաւ։

Ներքին գործերի մինիստրը ազդարարութիւն է տուել իտալական կուսակալներին, որպէս զի

նրանք առանձին հսկողութիւն դործ դնեն «Italia irridenta» լրագրի մէջ տպված յայտարարութիւնների վրա:

«Gazetta d'Italia լրագիրը հաւատացնում է, որ պ. Կայրօլի Ռթէնքի դեսպանութիւնը յանձնել է պ. Մամիանիին: Թագաւորը պ. պ. Կայրօլիի, Վիլլայի և բազմաթիւ պալատականների հետ միասին ուղևորվեցան Զենովա, երեկոյեան նրանք կը հասնեն այդ քաղաքը:

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Մի քանի ժամանակ է, որ Գերմանիայում ազատամտական լրագիրները սաստիկ զգուշութեամբ և կարծես ամեն քայլից երկիւղ կրելով լուր են տարածում թէ իբր ազգային-ազատամիտ կուսակցութեան հանձարեղ առաջնորդ պ. Լասկեր հետևելով պ. Բէնինդսէնի օրինակին, կամենում է յետ քաշվել պարլամէնտական ասպարէզից: Վերջին օրերս ազատամտական մի լրագիր ցաւելով հաստատեց այդ լուրը: Առաջին անդամից այդ լուրը շատ զարմանալի չը թուեցաւ. բայց փոքր առ փոքր ազատամտական կուսակցութեան լրագիրները, որոնք առանց այդ էլ արդէն կատաղած էին պ. Բէնինդսէնին հրաժարականով, սկսեցին իրանց նշանաւոր լրագիրների մէջ ինչպէս օրինակ «Köln. Zeitung» և «Magdeburger Zeitung» սաստիկ ամբաստանել ձախակողմեան կուսակցութեանը, մանաւանդ պ. Լասկերին, որը դրդել էր պ. Բէնինդսէնին հրաժարվել պարլամէնտական ասպարէզից: Այս վերջին թերթը կասաղութիւնը մինչ այն աստիճան հասցրեց, որ սկսեց մինչև անգամ կոպիտ հայհոյանքներ տալ նշանաւոր պատգամաւորին. ազատական թերթերը այժմ հայհոյում են այն պատգամաւորին, որի համար երբեմն բաւականացուցիչ գովասանութիւններ չէին գտնում անելու: Բաղդաւորաբար պ. Լասկեր այն մարդկերանցից չէ, որ այսպիսի ենչէն արգելքների առաջ խոնարհի և յետ կանգնի իր մի ամբողջ տարվայ ջերմեռանդ աշխատութեան ասպարէզից: Թող ովինչ ուզում է ասի, նա մի քայլ անդամ յետ չի կենայ իր գործունէութեան ասպարէզից: Նրա վերջին ճառից պարզ երևում է, որ բոլորովին անհիմն էին այն բոլոր լուրերը, որոնք տարածված էին նրա պարլամէնտից հեռանալու մասին: Ով որ բաղդ է ունեցել շատ թէ քիչ մօտ ծանօթանալու պ. Լասկերի եռանդուն գործունէութեան հետ, նա անշուշտ համոզված է նրա երկաթէ անձկուն հաստատ բնաւորութեան հետ: Եւ շատ չի անցնի որ ազգային ազատամիտ կուսակցութեան անդամները բոլորն էլ ստիպված կը լինեն նորից ժողովվել պ. պ. Լասկերի, Ֆօրկենբէկի և Բիխտէրի պէս անձնաւորութիւնների շուրջը, որովհետև ուղիղը խոստովանելով, դարձեալ դրանք են, շատ թէ քիչ որ այժ են կազմում, և դարձեալ դրանք են, որ ազատամիտ կուսակցութեան ամենաանձնուէր պաշտպաններն ու նեցուկներն են: Զը պէտք է մոռացած, որ Բիսմարկի պէս մի վիթխարի կուսակից կորցնելուց յետոյ, այդ կուսակցութեանը անհրաժեշտ են պ. Լասկերի պէս շատ ջերմ ու հարազատ զաւակներ, որպէս զի այդ կուսակցութիւնն էլ գոյութիւն ունենայ, ոչ ինչպէս մի հզօր կուսակցութիւն, այլ որ նա գոյութիւն ունենայ գոնէ իբրև մի զոյն ունեցող կուսակցութիւն, որովհետև Գերմանիայի քաղաքական ներկայ հանգամանքների մէջ ազգային-ազատամիտ կուսակցութեանը, ցաւելով պէտք է ասած, որ շատ ենչին դեր է վիճակված խաղալու: Պ. Լասկեր մի եռանդուն պրոգրամմա է կազմում իր կուսակցութեան համար, որով նրանք կը ներկայանան Պրուսիայի սեպտեմբերի ընտրութիւններին:

Նորերումս Էրֆուրտի մէջ կայացած պ. Լուցիուսի ընտրութիւնը մեծ գոհութեան պատճառ տուեց ամենքին: Պատուելի պատգամաւորին մինիստրութեան պաշտօն յանձնեցին, և ամենքը իրաւունք են տալի այդ արդարացի ընտրութեանը:

Ասում են, որ պ. Լուցիուս Էրֆուրտի նահանգում տասներկու տարի շարունակ պատգամաւոր է եղել, և բոլոր այդ ժամանակ նա ամենքից հաւասարապէս յարգված ու պատված է եղել: Վերջին ժամանակներս կամենում էին նրան մի ախոյեան տալ, և պէտք է խոստովանած, որ այդ ախոյեանը մեծ նշանակութիւն ունէր, որովհետև քուէարկվելով պ. Լուցիուսի հակառակ, այնու ամենայնիւ նա ձայների ահագին բազմութիւն ստացաւ, այն է 2300 ձայն 5000-ի դէմ: Այդ միջոցին առաջարկված էր և մի ուրիշ սոցիալական կանդիդատ, որը չը նայելով, որ միայն 1,600 ձայն ստացաւ, բայց դա նշանաւոր է նրանով, որ 1878 թ-ի կանդիդատի ստացած ձայներից տասը անդամ աւելի ստացաւ:

ԹԻՒՐՔԻԱ

—

«Новое Время» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը գրում է, թէ Մէհէմմէդ-Սէիդ-փաշա — որը յայտնի է իբրև Ստամբօլի զեներալ-նահանգապետ և հօֆմարշալ, և որի համար ասում են, որ անգլիացի է—այս մօտ օրերս Կ. Պօլսից կը վերադառնայ Զէյթուն իբրև ծայրագոյն գործակատար: Նա կաշխատի վրձռել այն դժուարութիւնները, որոնք ծագել են Հայաստանում, և որոնք վերջին ժամանակներս ոչ թէ միայն չեն փոքրացել, այլ և ընդհակառակը աւելի և աւելի յուսահատական ձևեր են ստացել: Ընդհակառակ վերջին ժամանակներս այնտեղ ուղարկված այն յանձնաժողովի անդամների անգործութեանը, որոնց մէջ ի թիւս այլոց գտնվում են նոյնպէս և Մազհար-փաշա, որ ազգով թիւրք է, և հայազգի Նուրեան էֆէնդի:

Վերոյիշեալ լրագրի յարգելի թղթակիցը ասում է, որ Նուրեան էֆէնդի ամեն թիւրքից առաւել է պաշտպանում թիւրքիայի շահերը, և նրան բոլորովին արդարացի կերպով են ազգի դաւաճան համարում: բացի այս նա վերին աստիճանի ցած բնաւորութեան տէր մարդ է:

Զէյթունի հայերը պահանջում են թիւրքաց կառավարութենից 1) որ նա ընդարձակ Զէյթունի գայմագամութեան սահմանները, 2) որ նա քրիստոնեայ գայմագամ նշանակէ, 3) որ նա տեղային խառն միլիցիա կազմէ, 4) որ նա հեռացնէ թիւրքաց բաւալիօնը, որը նորերս մտաւ Զէյթուն, և որի համար զինուորանոցներ են շինում (սա մի այնպիսի բան է, որի նմանը Զէյթունը մինչ-քսվն անդամ չէր անցկացնի), 5) որ նա հարկահանութիւնը կանոնաւորի և ab antiquo-ի որոշման համեմատ առնէ, որ կը լինի 25,000 պիաստր, 6) որ նա պահպանէ տեղային statu quo և վերջապէս 7) որ նա ընդհանուր թողութիւն շնորհէ:

Սրանից յետոյ յիշեալ թղթակիցը աւելացնում է, որ հազիւ թէ Զէյթունցի հայերին յաջողէր ստանալ բոլոր այս պահանջները, և այս այն պարզ պատճառով, որ մեծ պետութիւնների դեսպաններից ոչ մէկը չէ պաշտպանում նրանց: Իսկ ինչ կը վերաբերի Էէյարդին, նա անդադար և միշտ ի չարն է գործ ածում հայոց պատրիարքի հաւատարմութիւնը, և գործում է միշտ յօգուտ սուլթանի: Ի՞նչպէս էք գրում նրա այս վարմունքը, շատ ազնիւ է, այնպէս չէ՞:

Սուլթանը Խէյրէդդին և Մահմուտ-Նէդդին փաշաներին ամսական 15,000 պիաստր թոշակ կապեց: Ասում են, որ Յէտինիէում շուտով կը նշանակվի դիպլոմատիական ներկայացուցիչ:

Սուլթանը յանձնել է Ֆուատ փաշային, որ նա օգոստոսի 3-ին ուղևորվելով դէպի Եգիպտոս, տանէ իր վաւերացման ֆիրմանը:

Ալի-Սաիբ-փաշա, Միւնիֆ էֆէնդի և Մէջիբ-փաշա յունական սահմանը որոշելու համար կազմված յանձնաժողովի անդամներ պէտք է նշանակվեն:

Բէլգիական «Nord» լրագիրը ասում, է որ մայոր Տրատտէր Հայաստանում անգլիական գլխաւոր հիւպատոս է նշանակվել. նա կը նստի Էրզրումի մէջ Քիւրդստանի գլխաւոր հիւպատոս տիտղոսով: Այս բանը լսելով լուսաւորչական-հայերի պատրիարքը, դիմեց Էէյարդին և բողոքեց այս տիտղոսի մասին, որը, մոռանալ տալով հայ տարրի գոյութիւնը, կարծես դիտաւորութիւն ունի քիւրդերին աւելի նշանակութիւն տալու—քիւրդերին, որոնք ոչ մի հաստատ բնակութեան տեղ անդամ չունեն, և որոնք այնքան թշնամի են հայ ժողովրդին: Դեսպանը պատասխանեց, թէ անունը գործին չէ վնասում, բայց պատրիարքը այդ կարծիքի չէր, և նա հետևեալ օրը մի պաշտօնական բողոք ներկայացրեց անգլիական դեսպանին, որի պատճէնը նա ուղարկեց բոլոր պետութիւնների ներկայացուցիչներին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պէրուի մինիստրը Լօնդօնում մի հեռագիր ստացաւ Պանամայից, որի մէջ յայտնված է, որ Իկուիկ քաղաքը նորից ենթարկվեցաւ չիլիական նաւատորմի ռմբակոծութեանը. բայց այս անգամվայ վնասը շատ մեծ չէ:

—Մի ենոյն հեռագրում ասված է, որ «Huescar» անունով նաւը մի չիլիական նաւ գերեց, որի վրա գտնվում էին բազմաթիւ պաշարեղէններ և մի գունդ հեծելազօր: Բացի այս վերոյիշեալ նաւը գերի է վերցրել այլ ևս երեք նաւեր, որոնք բեռնաւորած են եղել պղնձով և ածուխով:

—Ռուսսանի մօտ «Marie-Louise» անունով բէլգիական մի նաւ, որ գնում էր Ալէկսանտ, խորասուզվեց Բէնարեան կոչված ժայռի մօտ: Կապիտանը և 26 մարդիկ անհետացան ալիքների մէջ: Եօթ մարդիկ միայն ազատվեցան:

—Կ. Պօլսից հաղորդում են «Times» լրագրին, որ անգլիական նաւատորմը խարիսխ է գցել Միտելէնէ կղզու մօտ, և հաւանականաբար երկու կամ երեք օրից յետոյ, նա կը նաւէ դէպի Բէզիկեան ծոցը: «Fawn» կոչված կանոներեան մակոյկը Բոսֆորից լողաց դէպի Դարդանէլ: Կիսապաշտօնական ձևով յայտնված է, որ անգլիական նաւատորմի այս շարժումը ոչինչ քաղաքական նշանակութիւն չունի:

—Պէրայից գրում են «Presse» լրագրին, որ Զարագանեան պալատի (որի մէջ ապրում է այժմ նախկին Սուլթան Մուրադը) դռներից մէկը բոլորովին պատեցին, և պահապանների թիւը աւելացրին, մինչդեռ ներսը ծառայող մարդոց թիւը զգալի կերպով պակասեցրին: Նախկին Սուլթանի անունով ուղարկված լրագիրներն ու նամակները նախ և առաջ բաց են լինում և կարդացվում Տօլմա—Բախչէի մէջ: Օրը երկու անդամ Սուլթանի ադիւտանտը այցելութիւն է գնում նախկին Սուլթանին:

—Ֆուատ-փաշա, որ տանում է Ալէքսանդրիա Եգիպտոսի նոր խէդիվի վաւերականութիւնը, տանում է իր հետ և Սուլթանի ձեռագիր նամակը, որ ուղղված է նոր խէդիվին, և որի մէջ սուլթանը հրաւիրում է նոր խէդիվին կարելի եղածին չափ շուտ դալ Կ. Պօլիս:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 օգոստոսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ օրիորդ Լօրիս-Մէլիքօվին շնորհվեցաւ Կայսրուհու Ֆրէյլինի կոչումը: Միջին դաղստանի զինուորական առաջնորդների վարչութիւններին իրաւունք է տուած մանաւոր անցագիրներ (պօդորօժնայա) տալ հետևեալ տեղերում. Ավարեան վիճակի Գունիբեան ամրոցում, Բօտլիխում և Խունզախ գիւղում, նոյնպէս Դարշինեան (?) վիճակում: Գլխաւոր ինտենդանտ գեներալ-լէյտենանտ Սկվօրցօվին իբրև վարձատրութիւն անցեալ պատերազմի աշխատութիւնների, շնորհվեցաւ սպիտակ արծիվի շքանշանը:

ԿԱՒԿԷՍ, 6|18 օգոստոսի: Կաբինէտը ամբողջ կազմակերպութեամբ հրաժարական տուեց: Խէդիվը ընդունում է նոր մինիստրութեան նախագահութիւնը: Նոր մինիստրներն են. արդարութեան և ներքին գործերի՝ Զուլ-Ֆիկար-փաշա, արտաքին գործերի՝ Մուստաֆա-Բանի, Ֆինանսներին՝ Խայդար, պատերազմական և ծովային՝ Օսման-Բէվկի, հասարակաց աշխատանքներին՝ Մէհէմմէդ-Մարաղէլի, ժողովրդական լուսաւորութեան Ալի-Իբրահիմ-փաշա:

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինչի առաջիկայ օգոստոսի վերջը լոյս կը տեսնի «ԶԱՐԿԵԱՐԻ ՔՆԱՐԸ» վերնագրով Շամախեցի Աբրահամ Մարտիրոսեանի (Զարկեարի) բանաստեղծութիւնները, որ հրատարակվում է նորա որբ օրիորդի օգտին, իւրաքանչիւր օրինակի բաժանորդագինը 50 կոպէկ նշանակելով:

Ով ցանկանում է իրա բաժանորդագրութեամբ յարգել հանգուցեալ բանաստեղծի յիշատակը, թող բարեհաճի դառնալ Բաքու «Զարկեարի Քնարը» հրատարակիչ Աւագ Գրիգորեանցին հետևեալ հասցէով. Аваку Лазаревичу Григорьву, въ Баку.

3—2

ԴԵՄԻՐՕՎԻ, ՏՕԼԼԷԻ ԵՒ ԸՆԿ. ԹՈՖԼԻՍՈՒՄ գտնված ԾԽԱԽՈՏԻ ԽԱՆՈՒԹԸ յայտնում է հասարակութեանը, որ նորերումս ստացել է մեծ քանակութեամբ ԹԻՒՐՔԻԱԿԱՆ ընտիր ԾԽԱԽՈՏ պ. պ. գնողների պահանջները բոլորովին բաւականացնելու նպատակով: Ծխախոտի առևտուրը ԿԱՏԱՐՎՈՒՄ Է Դվօրցօվայա փողոցի վրա, ԸՆՏԱԲԻ ՄՕՏ Միրզօեվի տան մէջ գտնվող գլխաւոր խանութում, նոյնպէս Սիօնսկայա փողոցում ԱՐԾՐՈՒՆՈՒ ՔԱՐՎԱՆՍԱՐԱՑՈՒՄ և Գօլովինսկի պրոսպեկտի վրա Ստեպան ՄԱՆՎԵԼՕՎԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

3—2

Երևանայ թեմական և ծխական դպրոցների համար հարկաւոր են ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ: Շաբաթական ամեն մինը կունենայ 24. ԴԱՍ: Տարեկան վարձատրութիւնը է 600—800 ր.: Ցանկացողքթիֆլիսում կարող են դիմել Հոգաբարձութեան անդամ՝ պ. Վարդան Եղիազարեանին, իսկայ քաղաքներից Երևանայ հոգաբարձութեանը: 4—4

Երևանայ Թաղական-արական դպրոցներին և Թեմական դպրանոցին հարկաւոր են ուսուցիչներ այս ապագայ սեպտեմբերի մէկից. 1) Հայոց լեզուի, պատմութեան և Հայաստանի աշխարհագրութեան. 2) Ռուս լեզուի, պատմութեան և Ռուս. աշխարհագրութեան. 3) ընդհանուր պատմութեան, աշխարհագրութեան և բնական պատմութեան. 4) թուաբանութեան, երկրաչափութեան, նկարչութեան, վայելչագրութիւնների և մարմնամարզութեան. 5) դաղիերէնի և վերակացութեան համար: Մանրամասնութիւնների մասին պէտք է թղթակցել Թեմ. դպրանոցի վարչութեան հետ:

Տեսուչ յիշեալ դպրոցների.

Սարգիս Բէգ-Նազարեանց

7—7

Дозволено Цензурою 7 Августа 1879 г. Тифлисъ Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона